

ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի ռեկտորատի 2015թ. նոյեմբերի 16-ի նիստի /արձանագրություն N 3/

1. ԵԹԿՊԻ-ի 2016թ. բյուջեն ձևավորելու նպատակով՝

1.1 հանձնարարել ինստիտուտի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումներին 10-օրյա ժամկետում ինստիտուտի հաշվապահություն ներկայացնել ստորաբաժանման աշխատանքները կազմակերպելու համար անհրաժեշտ պարագաների ցանկը (գույք, տեխնիկական միջոցներ, գրենական պիտույքներ և այլն),

1.2 հանձնարարել ֆակուլտետի ղեկաններին մինչև ղեկտեմբերի 1-ը ներկայացնել 2015-2016 ուս. տարվա դիպլոմային աշխատանքների հետ կապված ծախսերի նախագծերը (բեմադրական ծախսեր, նկարահանման ծախսեր և այլն):

2. Ս.թ. նոյեմբերի 18-ին ինստիտուտի ռեկտորին աշխատանքային այցով գործուղել Վանաձորի մասնաճյուղ,

2.1 հանձնարարել գլխավոր հաշվապահ Հ. Նալբանդյանին կատարել գործուղման հետ կապված անհրաժեշտ ձևակերպումներ:

3. Հանձնարարել իրավախորհրդատու Է. Մանասերյանին մինչև ս.թ. ղեկտեմբերի 1-ը ՀՀ կառավարության 2002թ. ղեկտեմբերի 26-ի N2176-ն որոշմամբ հաստատված ԵԹԿՊԻ-ի կանոնադրությունը ներկայացնել ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեզիստր՝ սահմանված կարգով գրանցելու:

4. Հանձնարարել ինստիտուտի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումներին առաջիկա օրերին զեկուցագրերի տեսքով ներկայացնել հաշվետվություններ ՀՀ ԿԳՆ աշխատակազմի ներքին աուդիտի կողմից նշված թերությունների շտկման ուղղությամբ կատարված աշխատանքների վերաբերյալ:

Գիտքարտուղար

Գ. Հովհաննիսյան